

ԴԱՎԻԹ ՀԱԿՈՒՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԻԵՐԱՐԽԻԱՅԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Սույն հոդվածում հեղինակը դիտարկում է նորմատիվ իրավական ակտերի հիերարխիկ կառուցվածքի չափորոշիչների խնդիրը:

Հոդվածում հեղինակը սահմանազատել է իրավունքում կազմակերպչական հիերարխիայի խնդրի երկու ասպեկտներ. առաջին՝ իրավունքի ձևերի մակարդակի նկատմամբ իրավունքի էության բովանդակային մակարդակի առաջնության հիմքում ինչ չափորոշիչ է տեղակայված, երկրորդ՝ ինչպիսիք են հիերարխիայի չափորոշիչները նշված մակարդակներից յուրաքանչյուրի շրջանակներում, իրավունքի կառուցվածքում հիերարխիկ կապերի բնույթի, ընդհանուր և առանձնահատուկի բացահայտում: Այդպիսիք են՝ իրավաբանական ուժը (իրավագործությունը), ակտն ընդունող մարմնի սահմանադրական (օրենսդրական) մակարդակը, հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման աստիճանը:

Հիմնարար- իրավունք, նորմատիվ իրավական ակտ, հիերարխիա, իրավաբանական ուժ, իրավագործություն:

Քանի որ իրավունքը կարող է դիտարկվել որպես հիերարխիկ աստիճանակարգված համակարգ, անհրաժեշտաբար հարց է ծառանում, ի՞նչ չափանիշի հիման վրա է իրականացվում տարբեր մակարդակների աստիճանավորում՝ բարձրերի և ցածրերի: Այս առումով, նշենք, որ ՀՀ Սահմանադրությունը որոշ չափով լուծել է այս խնդիրը (տե՛ս, հոդված 5-րդ):

Ըստ մեր տեսանկյունի, իրավունքում նկարագրության մակարդակների հիերարխիայում այս կամ այն օբյեկտի տեղի սահմանման չափորոշիչ հանդիսանում է դիտարկվող օբյեկտների ընդհանրության չափանիշը, որը պետք է գնահատվի կիրառական իրավունքի կոնկրետ մակարդակի նկատմամբ:

Օրինակ, երբ խոսում ենք իրավունքի համակարգի նկարագրության մակարդակների հիերարխիայի վերաբերյալ, ապա հետազոտվող օբյեկտների ընդհանրության չափանիշի որակով հանդես է գալիս իրավական ռեժիմը, որը գործում է սոցիալական իրականության այս կամ այն մակարդակում, որպես իրավաբանական միջոցների որոշակի համակցությունում արտահայտված և ցանկալի սոցիալական վիճակ, իրավունքի սուբյեկտների շահերի բավարարման համար բարենպաստության կոնկրետ աստիճան ստեղծող իրավական կարգավորման «հատուկ կարգ»:

Կարծում եմ, իրավունքում ընդունվող որոշման բարդության մակարդակների սահմանման համար չափորոշիչ հանդիսանում է իրավաչափ վարքագծի հակաիրավականից սահմանազատման համար այս կամ այն մակարդակի իրավաբանական միջոցների անհրաժեշտությունը և բավարարությունը:

Այսպես, եթե պրակտիկայում իրավաչափության և անիրավության սահմանման համար չի ծա-

գում բացի անմիջական իրավական տեքստերից՝ (նորմատիվ ակտեր, նախադեպեր, սովորույթներ և այլն) իրավական գաղափարախոսություններում, արժեքներում, իրավունքի սկզբունքներում արտահայտված մետատեքստերին դիմելու անհրաժեշտություն, կարելի է ասել, որ իրավունքի ձևի մակարդակը բավարար է կոնկրետ որոշման ընդունման համար: Երբ ծագում են բարդ գործեր և որոշակի մակարդակում իրավաբանական միջոցները բավարար չեն որոշման ընդունման համար, ապա դիմում են առավել բարձր մակարդակի: Օրինակ, եթե իրավունքի իրականացման գործընթացում ծագում է նորմատիվ իրավական ակտի մեկնաբանության անհրաժեշտություն, որպես կանոն, տվյալ գործընթացի վերաբերյալ անհրաժեշտ է պարզաբանել օրենսդրի իրական կամքը, այսինքն՝ ընդունվող որոշման բարդությունը, ըստ էության, փոխանցվում է իրավունքի ձևի մակարդակ (իրավունքը իրականացնող սուբյեկտը իրեն պատկերացնում է օրենսդրի տեղում): Եվ հետո, եթե իրավունքի ձևին դիմելու միջոցով բանական ուղիով հնարավոր չէ պարզաբանել օրենսդրի կամքը, ապա իրավունքը իրականացնող սուբյեկտը որոշակի որոշման ընդունման համար դիմում է իրավունքի սկզբունքներին, իրավական գաղափարներին, արժեքներին և այլ իրավական գաղափարախոսությանը (իրավունքի մեջ էության-բովանդակային մակարդակ):

Իրավունքում կազմակերպչական հիերարխիայի նկատմամբ անհրաժեշտ է սահմանազատել խնդրի երկու ասպեկտներ. առաջինը՝ իրավունքի ձևերի մակարդակի նկատմամբ իրավունքի էության-բովանդակային մակարդակի առաջնության հիմքում ինչ չափորոշիչ է տեղակայված, երկրորդը՝ ինչպիսիք են հիերարխիայի չափորոշիչները նշված մակարդակներից յուրաքանչյուրի շրջանակ-

www.journal.lawinstitute.am

ներում, իրավունքի կառուցվածքում հիերարխիկ կապերի բնույթի արտահայտում, ընդհանուրի և առանձնահատուկի բացահայտում:

Այժմ դիտարկենք իրավունքի տարբեր մակարդակներում հիերարխիայի չափորոշիչները: Անհրաժեշտ է նշել, որ իրավունքում հիերարխիայի հարցերի հետազոտություններում, այս խնդիրը առավելագույնս մշակված է կիրառական իրավունքի աղբյուրի համակարգի նկատմամբ:

Խորհրդային և հետխորհրդային շրջանում հիերարխիկ համակարգում իրավունքի աղբյուրի որոշիչ տեղը նկարագրող չափորոշիչի՝ կոնվենցիալ հասկացության որակով կիրառվում է «իրավաբանական ուժը»²:

Սակայն, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նրան, որ գրականության մեջ «իրավաբանական ուժը» կարող է կիրառվել ինչպես «իրավաբանական էներգիայի» կրիչի տիրապետողի, այնպես նաև տվյալ իրավաբանական ուժի քանակության բնութագրության համար:

Այսպես, Վ. Ա. Տոլստիկը ընդգծում է երկակի իմաստը, որը ներդրվում է «իրավաբանական ուժ» հասկացության մեջ: Իրավագիտության մեջ իրավական ուժը ընկալվում է երկու իմաստներով: Մի կողմից, որպես իրական գործելու, փաստացի իրավաբանական հետևանքներ ծնելու իրավական ակտերի հատկություն: Այս դեպքում, խոսում են իրավաբանական ակտի կամ դրա հատվածի ուժ ստանալու, ազդեցության կասեցման վերաբերյալ: Մյուս կողմից, որպես համեմատական հատկություն, որը արտահայտում է տվյալ նորմատիվ ակտի ենթադասության աստիճանը վեր կանգնած մարմինների ակտերին, որը նշանակում է նաև օրենսդրության հիերարխիկ կառուցվածքում դրա տեղը³: Ակտի ուժով օժտվածությունը՝ ըստ հրապարակվող ակտի հետ կապված՝ հաստատված կարգով իրավաստեղծման իրավասու սուբյեկտի արտահայտված կամքի պահպանումն է: Ի տարբերություն ուժով օժտվածությունից՝ ակտի ազդեցությունը, ակտի հասցեատերերի վարքագիծն է՝ դրանում հաստատված նորմերին համապատասխանությամբ: Նման կերպ դատում է նաև Ա. Բ. Պոլյակովը. «Իրավունքի և իրավական նորմերի ազդեցությունը տարբերվում է նորմատիվ-իրավական ակտերի ազդեցությունից: Վերջին դեպքում ազդեցության տակ առավել հաճախ հասկանում են ոչ թե սուբյեկտների իրավունքների և պարտականությունների իրավական ակտի սահմանման փաստացի ունակությունը, այլ դրա մոտ այսպես կոչված իրավաբանական ուժի առկայությունը: Ակտի իրավաբանական ուժը նշում է դրա պետական կամային ընդունումը և այլ իրավական ակտերի հիերարխիայում կարևոր տեղը: Օրենսդրական ակտը կարող է ունենալ իրավաբանական ուժ, սակայն չգործել, այսինքն մնալ «մահացած», «թղթի կտոր»:

Սակայն նաև պետականորեն ընդունված ակտի ազդեցությունը հնարավոր չէ առանց նրա իրավաբանական ուժ ձեռք բերելու»⁴:

Իրավունքի ձևի մակարդակում իրավաբանական ուժը երկրորդ նշանակությամբ ավանդաբար ընկալվում է որպես հիերարխիայում տարբեր մակարդակների առանձնացման չափորոշիչ: Դրա հիման վրա իրավահարաբերությունների սուբյեկտները սահմանում են իրավունքի աղբյուրներից ոմանց ենթակայությունը մյուսներին և ընտրում այն (նրանք), որով (որոնցով) կղեկավարվեն իրենց գործունեության մեջ:

Վերը կատարված վերլուծությունը հնարավորություն է տալիս առանձնացնել իրավունքի աղբյուրների իրավաբանական ուժի մի քանի հատկություններ.

1. Իրավաբանական ուժը հանդիսանում է ընդհանուր պարտադիրին հավակնող այլ սոցիալական կարգավորիչների շարքում իրավական-նորմատիվ միջոցների ճանաչման չափորոշիչ: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ իրավաբանական ուժը կոնկրետ նորմատիվ իրավական ակտի իրավագործության չափորոշիչն է, որը որոշվում է.

ա) ակտն ընդունող մարմնին սահմանադրական կամ օրենսդրական ձևով ամրագրված իրավասությամբ,

բ) ընդունվող ակտի սոցիալական նշանակությամբ,

գ) հասարակական հարաբերությունների ձևով ու բովանդակությամբ:

2. Իրավաբանական ուժը հանդիսանում է համեմատվող հատկություն, ինչը հնարավորություն է ընձեռնում հաստատել իրավունքի աղբյուրի և իրավունքի այս կամ այն աղբյուրում ամփոփված առանձին նորմատիվ-կարգավորիչ միջոցի տեղը իրավունքի ուղղահայաց հատման մեջ: Այս առումով, ֆրանսիացի իրավաբան Ժ. Լ. Բերթելը նշում է, որ. «իրավաբանական ուժը հանդիսանում է երկու նորմերի միջև հիերարխիկ հարաբերությունների սահմանման համար չափորոշիչ»⁵:

Մեր կարծիքով, իրավաբանական ուժը բնութագրում է օրենսդրական համակարգը ստատիստիկայի տեսանկյունից, այսինքն՝ սահմանում է հասարակական հարաբերությունների անմիջական կարգավորման գործընթացում (դինամիկայում) ծագող տարբեր կարգադրագրերի միմյանցից կախվածության և հարաբերակցության սկզբունքները: Ընդ որում, իրավաբանական ուժի հիման վրա կառուցված հիերարխիկ կապերը ձևավորում են օրենսդրության ուղղահայաց կառուցվածքը՝ սահմանելով նորմատիվ կարգադրագրերի հաջորդականությունը և սուբորդինար բաշխման մեջ հաստատությունը: Այս համատեքստով Վ. Մ. Միրիխը գրում է իրավաբանական ուժի՝ որպես նորմատիվ իրավական ակտի դասակարգման չափորոշիչ:

րոշչի վերաբերյալ⁶, իսկ Ս. Ս. Ալեքսեևը նշում է, որ. «Իրավաբանական ուժը հանդիսանում է գլխավոր հատկանիշ, որը սահմանում է հիերարխիկ կառուցվածքում այս կամ այն ակտի տեղը»: Ընդհանրապես պետք է ընդգծել, որ «իրավունքի աղբյուրների համակարգում իրավաբանական ուժի տարբեր աստիճանները հանդիսանում են այդ համակարգի ուղղահայաց կառուցվածքում հաստատուն ամրագրման արտահայտումներից մեկը»: Դիտարկելով իրավունքի աղբյուրների հիերարխիան՝ որպես ուղղահայաց կառուցված սանդղակ, կարելի է նշել, որ իրավական ուժը իրենից ներկայացնում է մեկ նորմային-իրավական ակտի մյուսի վրա ազդեցության աստիճան, ինչից էլ կախված է սանդղակում տվյալ նորմատիվ ակտի աստիճանակարգը:

3. Իրավաբանական ուժը բնութագրում է իրավունքի ձևի մակարդակում իշխանության և ստորադասության հարաբերությունները:

Տվյալ համատեքստում իրավաբանական ուժը հանդես է գալիս որպես հատկություն, որը արտահայտում է պետական մարմինների ակտերի տվյալ տեսակի հարաբերակցությունը ակտերի այլ տեսակների հետ, իրավական ակտերի համակարգում դրա տեղը: Այս առումով իրավաբանական ուժը հանդիսանում է միայն հատկություն (հատկանիշ), որը բնութագրում է նորմատիվ իրավական ակտերի այս կամ այն ազդեցությունը իրենց կողմից հաստատված կամ այլ նորմերի, կամ այլ դրույթների վրա: Ընդ որում, ցածր աստիճանի իրավաբանական ուժի ակտը չպետք է հակասի առավել բարձր իրավաբանական ուժի ակտերին, չի կարող փոփոխել կամ չեղյալականացնել վերջիններիս:

Համանման կարծիք ունի նաև Մ. Յու. Օսիպովը, երբ նշում է, որ. «Իրավաբանական ուժը՝ մեկ իրավական ակտի մյուսի վրա ազդեցության սահմաններն են, որի դեպքում մեկ նորման կամ համապատասխան իրավական ակտը սահմանում են մյուս իրավական ակտերի (նորմերի) գործառնությունը, բովանդակությունը և ձևը»⁷: Իսկ Ս. Վ. Պոլենինան և Ն. Վ. Սիլչենկոն նշում են, որ. «Նորմատիվ ակտի իրավաբանական ուժը՝ վերջինիս գլխավոր հատկանիշն է, համեմատական հատկությունը, որը արտահայտում է մեկ նորմատիվ ակտի ենթակայության աստիճանը վերին մարմինների ակտերին, իսկ նշանակում է՝ դրա տեղը օրենսդրության հիերարխիկ կառուցվածքում»⁸:

4. Իրավաբանական ուժը հանդիսանում է իրավունքի այս կամ այն աղբյուրը ստեղծած մարմնի կամ սոցիալական խմբի հասարակությունում հանրային իշխանության կազմակերպման համակարգում գրված աստիճաններից մեկը: Յա. Մ. Մազազիները գրում է իրավաբանական ուժի վերաբերյալ որպես իշխանական կամքի ուժ, վերջիններս տեղաբաշխվում են «մեկ իշխանությունների

մյուսներին աստիճանի ձևով ավագության և ստորադասության համակարգում, որով բարձրանալով, մենք գտնում ենք աճող հեղինակության և ուժի իշխանական մարմիններ, մինչև կհասնենք ինքնիշխան, այսինքն այնպիսին, որը բարձր է մյուսներից, սակայն, որից բարձր չկա»⁹: Մեր կարծիքով, իրավաբանական ուժը արտահայտում է տվյալ նորմատիվային ակտից վեր կանգնած մարմիններին այլ ակտերի ստորադասության աստիճանը, սահմանադրության, այլ օրենքների գերակայության սկզբունքի իրականացումը:

5. Իրավաբանական ուժը ծառայում է այս կամ այն նորմատիվ կարգավորիչ միջոցի առաջնության չափորոշիչ հիերարխիկ բախման դեպքում: Այսպես, Գ. Ա. Գաջիևը նշում է. «Իրավական ակտի իրավաբանական ուժը արտահայտում է մեկ ակտի հարաբերակցությունը մյուսների հետ և սահմանում տեղը, որը զբաղեցնում է իրավական ակտերի համակարգում... սահմանում է ակտերի միջև առաջնությունը և ակտերի հաջորդականությունը, որոնք կգործեն իրենց միջև հակասությունների ծագման ուժով»¹⁰:

Իրավաբանական գրականության մեջ ընդունված է սահմանազատել իրավաբանական ուժը և իրավունքի աղբյուրի պարտադիրությունը: Այսպես, իրավաբանական ուժը կարող է հանդիսանալ ավելին կամ պակաս, դա իրավական ակտի կարգավորիչ հատկությունն է, որը արտահայտվում է այլ ակտերի հետ հարաբերակցության մեջ: Պարտադիրությունը աստիճաններ չունի և իրենից ներկայացնում է ցանկացած օրինական ակտի բացարձակ հատկություն: Հնարավոր չէ պատկերացնել պարտադիրության աստիճանը, առանց այն հաշվի առնելու: Պետությունը միանման պահանջում է ցանկացած իրավական ակտի պահպանություն՝ անկախ դրա իրավաբանական ուժի աստիճանից: Հետևաբար, մեր կարծիքով, իրավաբանական ուժն իր բովանդակությամբ ընդգրկում է իրավունքի ձևի մակարդակում հիերարխիկության արտահայտման բոլոր էական կողմերը: Քանի որ, իրավաբանական ուժի և իրավական ակտերի էությունը կայանում է «այնպիսի դիսկուրսին հարկադրության մեջ, որտեղ դատողությունը ձեռք է բերում իմպերատիվ բնույթ ի շնորհիվ գործընթացի պահպանության, որում տեղի է ունենում աստյանի՝ որպես հեղինակային դատողության բարձրագույն ինստիտուցիոնալ ձևի կայացումը»:

Իրականացված հետազոտությունը հնարավորություն է տալիս սահմանել իրավաբանական ուժը որպես իրավունքի ձևի մակարդակում կազմակերպչական հիերարխիայի կառուցման չափորոշիչ, որն արտահայտում է իրավունքի արտաքին և ներքին ձևի որոշակի տարրերի իրավաբանական էներգիայի քանակական չափը:

- ¹ ՏՆ՝Ս, Матузов Н. И., Малько А. В. Правовые режимы: Вопросы теории и практики // Правоведение 1996. 1. С. 17.
- ² ՏՆ՝Ս, Тихомиров Ю. А., Комеревская И. В. Правовые акты. Учебно-практическое и справочное пособие. М., 1999. С. 19.
- ³ ՏՆ՝Ս, Толстик В. А. Иерархия источников российского права. Дис. ... д-ра юрид. наук. Нижний Новгород, 2002, С. 144-145.
- ⁴ ՏՆ՝Ս, Поляков А. В. Общая теория права. СПб. СПбГУ, 2004. С. 624-625.
- ⁵ ՏՆ՝Ս, Бержель Ж. Л. Общая теория права. М.: Nota Bene. 2000. С. 161.
- ⁶ ՏՆ՝Ս, Сырых В. М. Логические основания общей теории права. С. 59.
- ⁷ ՏՆ՝Ս, Алексеев С. С. Общая теория права: Курс в 2 т. Т. 2. С. 218.
- ⁸ ՏՆ՝Ս, Осипов М. Ю. Системы в праве и правовые процессы. М., 2015, С. 6-7.
- ⁹ ՏՆ՝Ս, Поленина С. В., Сильченко Н. В. Научные советы топологии нормативно-правовых актов в СССР. М.: Наука, 1987, С. 27.
- ¹⁰ ՏՆ՝Ս, Магазинер Я. М. Общая теория права на основе советского законодательства. Гл. 3. Источники права // Правоведение. 1998. N2. С. 67.
- ¹¹ ՏՆ՝Ս, Гаджиев Г. А. Онтология права. М., 2013, С. 26-27.

Давид Акопян

Соискатель института философии, социологии и права
Национальной академии наук Республики Армения

РЕЗЮМЕ

Проблема критериев построения иерархии нормативно-правовых актов

В настоящей статье автором рассматривается проблема критериев, лежащих в основе иерархической структуры нормативно-правовых актов.

В статье автор разграничил два аспекта проблемы организационной иерархии в сфере права. Во-первых, какой критерий лежит в основе приоритета содержательного уровня сущности права над уровнем форм права. Во-вторых, каковы критерии, лежащие в основе иерархии, в рамках каждого из указанных уровней (выявление характера иерархических связей, общего и специфичного в структуре права). Таковыми являются юридическая сила, конституционный (законодательный) уровень органа, принявшего акт, степень правового регулирования общественных отношений.

Ключевые слова: право, нормативно-правовой акт, иерархия, юридическая сила, правомочие.

David Hakobyan

Post-graduate student in Law at the Institute of Philosophy,
Sociology and law of the National Academy of Sciences R A

SUMMARY

Problem of Criteria of Construction of Hierarchy of Normative-Legal Acts

In the present article the author considers the issue of criteria of the hierarchic structure of normative-legal acts.

In the article the author distinguished between two aspects of the problem of the organizational hierarchy in the sphere of law. First, what criterion underlies the priority of the substantial level of the essence of the law above the level of forms of law. Secondly, what are the criteria underlying the hierarchy within the framework of each of the mentioned levels (the identification of the nature of hierarchical relations, general and specific in the structure of law). These are the legal force, the constitutional (legislative) level of the body, which adopted the act, the degree of legal regulation in public relations.

Keywords: law, normative-legal act, hierarchy, legal force, authority.